

**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 241-Ա**

**10 օգոստոսի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի օգոստոսի 7-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Վանուիի Աբրահամյան», Արարատի մարզ, գ.Խաչփար 18, 15/1 (ՀՎՀՀ 49709331).
- 2) «Կվալտ» ՍՊԸ, Արարատի մարզ, ք.Մասիս, 155/2 (ՀՎՀՀ 04233913).
- 3) «Աբու-Լալա» ՍՊԸ, Արարատի մարզ, գ.Հայանիստ, (ՀՎՀՀ 04726259).
- 4) «Մարկո» ՍՊԸ, Արարատի մարզ, ք.Մասիս, Արգավանդ օդանավակայանի 1 (ՀՎՀՀ 04427471).
- 5) Ա/Ձ «Նարեկ Կիրակոսյան», Արարատի մարզ, գ.Ազատաշեն 3, 2/2 (ՀՎՀՀ 47842417):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողների գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 10/08/20 18:51:06 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**